

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԿԸ ԿԱՏԱՐԵՄ, Կ՛ՕԳՆԵՄ:

Աղփատներու ընդունելութիւն ընելը այսֆան օգտակար է ու անոնց աղօթքները Աստուծոյ մօտ են. «Նրանի անոր, որ աղփատին հոգ կը տանի, նեղութեան օրը Տէրը պիտի փրկէ զանիկա» Աղ. 41:1-3: Կարիքաւորները կերակրելու երջանկութիւնը այս է, ինչ որ Քրիստոս իրեն համար կատարուած կը նկատէ: Իսկ ի՞նչ պիտի շահիս, երբ ունեւորները խննոյժի հրաւիրես եւ կամ ի՞նչ պիտի ըլլայ անոր օգուտը: Անօթիներուն համար եղած ընդունելութիւնը օգտակար է, իսկ կուշտներուն համար եղածը՝ ոչ: Քրիստոս չըսաւ. «Յագեցածները կըշտացուցիք» ու նաեւ չըսաւ «Խմելիք տուիք անոնց, որոնք գինով էին», այլ՝ ըսաւ. «Տեսաք անոնք, որ ծարաւ էին եւ դուք անոնց ջուր տուիք խմելու: Տեսաք մերկերը ու զանոնք հագուցուցիք եւ օտարներուն այցելեցիք»: Նման գործերն են, որ արժանի պիտի ըլլան վարձատրութեան եւ երանութեան եւ ոչ թէ կուշտներուն եւ ունեւորներուն համար եղած կերուիտումները, որովհետեւ ան որ աղփատը, կարօտեալը, օտարը, հիւանդը եւ անտունին կը կերակրէ, ոչ թէ մարդ մը, այլ՝ Քրիստոսն է, որ կ'ընդունի, Քրիստոսն է, որ կը սփոփէ, Քրիստոսն է, որ կը մխիթարէ, Քրիստոսն է, որ կը հանգչեցնէ եւ Քրիստոսն է որ կը ծառայէ, քանզի անտուտ է Տէրունի խօսքը:

ԽԱՉԱՀԱՆԳԻՍ




Անցեալին, յատկապէս թաղային եկեղեցիներուն մէջ կատարուող արարողութիւն մըն էր խաչահանգիստը, ինչ որ պարզ ջուրի օրհնութիւնն էր Կենաց Փայտը իր մէջ ամփոփող խաչով:

Սովորութիւն էր, Կիրակիէն գատ շաբթուան մէջ որոշեալ օր մը, Ս. Պատարագ մատուցել եւ յաւարտ Ս. Պատարագին Խաչահանգիստ կատարել եւ օրհնուած ջուրը բաշխել ժողովուրդին:

Արարողութիւնը կը սկսի «Ապաւինեցաք ի խաչ քո արարիչ յաւիտեանից...» շարականով: Ընթացքը մոխացած է Ս. Գրային եւ աւետարանական հատուածի մը ընթերցումներով, եւ ապա Աղօթքն է, որ կու գայ հաւատացեալներուն ուշքն ու ներաշխարհը գրաւելու: Աղօթքը, որ այնքան գեղեցիկ կերպով կը բանաձեւէ ջուրին կարեւորութիւնը թէ՛ մարդկային, կենդանական աշխարհին եւ թէ՛ բնութեան մէջ:

Ձերմ աղբրսանք մըն է անիկա ուղղուած Հօր Աստուծոյ...

Շարունակելի



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԱՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԵ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2022 ԹԻՒ 39

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ Առ. 3.18-26 Եւ. 65.22-25: Գղ. 6.14.18: Ստ. 24.30-36

ՏՕՂ ԿԻՐԱԿԻ ԿԵՐԱԿԻ ԽՈՒՄԻՆ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՆՍԻ 24.30-36

Ապա մարդու Որդիին նշանը պիտի երեւի երկինքի մէջ եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն մարդու Որդին, որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած գօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծածայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թ՛գեցին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք, որ անոր ճիւղերը կը կակուղան եւ տերեւ կ'արձակեն գիտէք, թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին գիտէք, թէ մարդու Որդիին գալուստը մօտ է: Վստահ եղէ՛ք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ, եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան:

Մակայն ոչ ոք գիտէ, թէ երբ պիտի գայ այդ օրը կամ ժամը: Ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց միայն Հայրը:

Ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ ՊԻՏԻ ԳԱՅ ԱՅՌ ՕՐԸ ԿԱՐ ԺԱՄԸ: Ո՛չ երկինքի շրջանակները, ո՛չ իսկ Որդին, բայց միայն Հայրը:

Մեզմէ կը պահանջուի սիրելի հաւատացեալ ընթերցող արթուն եւ պատրաստ ըլլալ, ինչպէս Յիսուս կ'ըսէ: Արթուն եւ պատրաստ ըլլալ հոգիով, աղօթքի ճամբով: Ամենօրեայ աղօթքը կարեւոր անհրաժեշտութիւն է, հոգեւոր սնունդ է: Ինչպէս մեր մարմինը նիւթական սնունդի կարիքը ունի, նոյնպէս մեր հոգին հոգեւոր սնունդի՝ հացի կարիքը ունի: Ամենօրեայ աղօթքն է այդ հոգեւոր հացը, որուն միջոցաւ մեր հաւատքը կը զօրանայ եւ այն ատեն մենք արթուն եւ պատրաստ պիտի ըլլանք դիմաւորելու Տէրը:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉ

Ըստ եկեղեցւոյ աւանդութեան, սուրբ Հոսիփսիմեանց կոյսերը Դիոկղետիանոս կայսեր (243-311) կողմէ կը հալածուին կու գան Հայաստան եւ կ'ապաստանին Վարազայ լեռան լանջին: Սուրբ Հոսիփսիմէ իր վիզին կը կրէր Քրիստոսի խաչափայտէն մասունք մը, որ ստացած էր ժառանգաբար Կլավտիոս կայսեր տիկնոջ՝ Պատրոնիկէ թագուհիին կողմէ:

Հայաստանի մէջ Հոսիփսիմեանց կոյսերը հալածանքի կ'ենթարկուին եւ այդ պատճառով ալ Սուրբ Հոսիփսիմէն իր խաչը կը պահէ Վարազայ լեռան մէկ քարայրին մէջ: Հայաստանի մէջ միշտ գիտեին, թէ այդ խաչը պահուած է Վարազայ լեռան վրայ, բայց չէին գիտեր՝ թէ ուր:

653 թուին այդ լեռան վրայ իրենց նգնութիւնը կ'ընեն Թոդիկ նգնաւորը եւ իր աշակերտը՝ Հովել, որն ի բուն աղօթելով եւ խնդրելով Աստուծմէ, որ ձեռով մը Աստուած իրենց յայտնէ Խաչին վայրը: Հայր Աստուած, որ միշտ կ'ուզէ զինք հաւատացողներուն խնդրանքները իրականացնել, որ մը լոյսի տեսիլով 12 սիւներու մէջտեղէն վեր կ'անցատէ Սուրբ Նշանը՝ խաչը, որ կու գայ դէպի սուրբ խորանը, ուր կ'աղօթէին երկու նգնաւորները: Նոյն ատեն կը լսուի ձայն մը, որ կ'ըսէ. «Քրիստոս հանեցաւ բնակիլ Սուրբ Խաչին մէջ, ի պահպանութիւն եւ փրկութիւն հայոց աշխարհին»:

Լուսեղէն սիւները 12 օրեր շարունակ կ'երեւին Վարազայ լեռան Գալիլիա կոչւող գագաթին վրայ, այնպէս մը որ ամէն մարդ կրնար տեսնել գառնի:

Հոգեւորականներ եւ իշխաններ, հայոց ներսէս Գ. Տայեցի կաթողիկոսի եւ Ռշտունեաց Վարդ Ռշտունի սպարապետի գլխաւորութեամբ կու գան Վարագ՝ սուրբ Խաչին երկրպագելու: Ներսէս հայրապետը սուրբ Խաչի երեւումը տօն կը հռչակէ, 12 լուսեղէն սիւներու երեւցած տեղը եկեղեցի կը շինէ եւ, ուր որ իջած էր սուրբ Խաչը կը մեծցնէ եւ աւելի փառաւոր կը կառուցէ:

Այս առիթով կը գրուի նաեւ «Նշանաւ ամենայաղօ խաչիւղ քով Քրիստոս» շարականը եւ մինչեւ Վարազայ սուրբ խաչի տօնը կը սահմանուի 5 օրեայ շաբաթապահք, որ ժողովրդական լեզուով կը կոչուի «Վանեցիների»:

Վարազայ լեռան գագաթին եւ ստորոտին կը հիմնուին վերին եւ ներքին եկեղեցիները, որոնցմէ աւելի ծանօթ է ներքին Վարազավանքը, ուր կը պահէր խաչափայտի մասունքը մինչեւ 1021: Երբ Սենեքերիմ Արծրունի Վասպուրականի թագաւորութիւնը կը յանձնէ Բիւզանդիոսին, կը տեղափոխուի Սեբաստիա եւ իր հետ կը տանի նաեւ սուրբ Նշանը, սակայն քիչ ետք 1026-ին սուրբ Նշանը կը վերադարձուի Ներքին Վարազավանք: 11-րդ դարուն, Աշոտ Դ. Բագրատունի սուրբ Նշանին համար շինել կու տայ ոսկեայ տուփ մը եւ 1237-ին կը տեղափոխուի նոր Վարազավանք: Ասկէ ետք 1651-ին կը տարուի Խոշար, 1655-ին կը դրուի Վանի սուրբ Տիրամայր եկեղեցւոյ մէջ, որուն պատճառաւ ալ եկեղեցին կը վերանուանուի Սուրբ Նշան անունով: Մաղափա Օրմանեան պատրիարքը (1841-1918) իր «Ծիսական բառարան»-ին մէջ կը վկայէ, որ իր օրով սուրբ խաչը տակաւին կը մնար Վանի Սուրբ Նշան եկեղեցւոյ մէջ, սակայն Մեծ Եղեռնէն ետք անոր գտնուած վայրը անյայտ է:

Սուրբ Խաչին կը վերագրուին բազմաթիւ հրաշքներ, մանաւանդ Եղեսիոյ համաճարակի ժամանակ, երբ Վարազայ Սուրբ Խաչի գորութեամբ կանգ առած է համաճարակը:

Ագաթանգեղոսի վկայութեամբ, հայոց երկնակամարին վրայ լուսեղէն սուրբ Խաչը երեւցած է նաեւ սուրբ Գրիգոր Լուսաւորիչի, ինչպէս նաեւ սուրբ Մեսրոպ Մաշտոցի յուղարկաւորութեան ժամանակ Վաղարշապատէն մինչեւ Օշական՝ ըստ Մովսէս Խորենացիի վկայութեան:

Վարազայ Սուրբ Խաչը կը տօնուի Խաչվերացէն 15 օր ետք, այսինքն Սեպտեմբեր 25-էն մինչեւ Հոկտեմբեր 1-ի գուգադիպող Կիրակի օրը:

## Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՏ ԳԱՍ

### ՄՐԻՍՏՈՍԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ՝ ԱՆՈՐ ԹՎԳՎՈՐՈՒԹԻՒՆԸ ՏԱՐԱՎՈՂՆԵՐՆ ԵՆ

Առաջին.- Խաչեալ Փրկիչին իսկական զինուորները իրենց Զօրավարին՝ Քրիստոսի ներկայացուցիչներն են մարդոց կեանքին մէջ: Անոնք երկինքի զինուորներն են երկրի վրայ ապրող: Իբրեւ Քրիստոսի զինուորները՝ անոնք պէտք է Խաչեալին սիրոյ թագաւորութեան տարածիչները ըլլան աշխարհի մէջ: Այն հաւատացեալը, որ աշխատանք չի տանիր Տէր Յիսուսի թագաւորութիւնը տարածելու աշխարհի մէջ անիկա չի կրնար Քրիստոսի զինուորը նկատուիլ: Ի՞նչպէս կարելի է Քրիստոսի թագաւորութիւնը տարածել: Քրիստոսի թագաւորութիւնը կը տարածուի խօսելով այդ թագաւորութեան մասին, վկայելով այդ թագաւորութեան սիրտը հանդիսացող Յիսուսի սիրոյն մասին, բայց մանաւանդ, մարդոց քայլերը առաջնորդելով Յիսուսի եւ օգնելով անոնց, որ դառնան անդամ Քրիստոսի մարմինին, տաճար Սուրբ Հոգիին, որդեգիր երկնաւոր Հօր:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Յիսուսի զինուորները անոնք են, որոնք մարդիկը Յիսուսի կը բերեն:

#### ՈՍԿԵՂԷՆ ԽՕՍԻՔ

Անդադար Տէրը պիտի օրհնաբանէ: Անոր օրհներգութիւնը շրթներուս վրայ պիտի ըլլայ շարունակ: Տէրն է միակ պարծանքս: Թող տառապեալները լսեն եւ ուրախանան: Սաղմոս 34.1-2

## ԵՐԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒԶԵՍ...

### ԵՐԷ ԻՆՔՅԻՆՔԻ ԱՏՈՒԾՈՅ ԿՈՒԶԵՍ ՅՆՏՆԵԼ, ԿԱՐԿՆ՝ Սաղմոս 37

Սիրտդ, մի՛ նեղեր չարերուն համար, ո՛չ ալ նախանձէ անօրէն մարդոց, որովհետեւ անոնք շուտով պիտի խամրին խոտի պէս, պիտի չորնան այնպէս՝ ինչպէս դալար լոյսը կը չորնայ:

Տիրոջ վստահէ եւ բարիք ըրէ, որպէսզի երկրի վրայ ապրիս եւ ապահովութիւն վայելես: Միակ ուրախութիւնդ Տէրը թող ըլլայ, եւ ինք սրտիդ բոլոր բաղձանքները պիտի տայ: Քու կեանքդ Տիրոջ յանձնէ եւ վստահ եղիր, ան ամէն ինչ պիտի տնօրինէ: Յերեկի պէս պիտի շողացնէ արդարութիւնդ, իրաւունքդ՝ կէսօրուան արեւուն պէս: Լռութեամբ հնազանդէ՛ Տիրոջ, սիրտդ մի՛ նեղեր անոնց համար, որ անիրաւ յաջողութեան կը հասնին, եւ անոնց համար, որոնք չարիք կը նիւթեն: Չսպէ՛ բարկութիւնդ, մէկ կո՛ղմ դիր գայրոյթդ, սիրտդ մի՛ նեղեր, որպէսզի դուն ալ չարիք չգործես: Որովհետեւ չարագործները շուտով պիտի կորսուին, մինդեռ Տիրոջ վստահողները երկիրը պիտի ժառանգեն: Ժամանակ մը ետք՝ ամբարիշտը ա՛լ գոյութիւն պիտի չունենայ: Որքան ալ փնտռես՝ անոր հետքն իսկ պիտի չգտնես: Բայց հեզերը պիտի ժառանգեն երկիրը, եւ կատարեալ խաղաղութիւն պիտի վայելեն: Ամբարիշտը արդարին դէմ դաւ կը նիւթէ՝ անոր դէմ իր ակնանքները կրճատելով: Տէրը կը ծիծաղի անոր վրայ, որովհետեւ գիտէ, թէ մօտ է անոր կորուստի օրը: Ամբարիշտները իրենց սուրբերը կը քաշեն, իրենց աղեղները կը լարեն՝ նետահարելու համար աղքատն ու չքաւորը, սպաննելու համար ուղիղ վարքով ապրողները: